

ԱՐՇԱԼՈՒՅՍ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ 2. ՀՈԿՏԵՄԲԵՐ 1869 Բ. ՏԱՐԻ

597

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Սեպտեմբերի 27 օրը Սուրբ Էջմիածնի, Նորա միաբանից և ամենայն անկողմնասէր և արդարամիտ անձանց համար արժանայիշատակ օր մի պէտք է համարուի՝ ոչ թէ անոր համար միայն՝ որ մեր ընդհանուր Դիտապետի Ընտրան մեծահանդէս տօնախմբութիւնն էր կամ ուխտաւորաց խուռն բազմութեամբ վանքը լցուած լինելով՝ նոր կենդանութիւն մի ստացած էր հասարակօրէն հանդարտութիւն սիրող վանքը, և ոչ իսկ անոր համար՝ որ այն օր իրիկունը հրախաղ և լուսավառութիւն եղաւ 'ի պատիւ Վեհափառ Պատրիարքին—ոչ, այլ անոր համար աւելի՝ որ այն օրը հասկացող անձինք քանի մի ժամ կարող էին անցեալը ներկային հետ մտաց անաչառ կշռոյն մէջ չափելով՝ ուրախանալ անկեղծօրէն, որ Ազգային լեզուն և կրօնը՝ այս երկու հաստատղոյս հիմունքը,

որոյ վերայ ի սկզբանէ հետէ հաստատուած է մեր ազգայնութեան տեւողութիւնը, քանի մի տարիէ ի վեր զգալի կենդանութիւն ընդունած է այն Ազգախնամ Անձէն, որոյ Տօնախմբութիւնը շնորհաւորելու կ'դիմենք։

Այն օրը Մայր Էջմիածինը իրաւունք ունէր պարծելով իւր Խնամակալի վերայ՝ բերկրապատար ցնծութեամբ շողալ ու փայլել՝ գոյնզգոյն լապտերներով զարդարելով իւր խաւարահալած պատերը. վասն զի իւր որդիքը երամ երամ և գորովալեր սիրով փութացած էին յուխտ և յերկրպագութիւն և իրենց Ծայրագոյն Պետէն միշտ ընդունէին ՝ի ձեռս հովուաց եկեղեցւոյ անզըրդուելի աստուածպաշտութեան և միաբանական սիրոյ և խաղաղութեան խրատներ. ուստի և ծերացած Մայր մի իւր նորահաս որդւոց սրտին մէջ տեսնելով բարեպաշտութիւնը արծարծած՝ կ'մոռնար պահ մի անցելոյն դառն պատահարները և պայծառ ապագայի մը յուսով կ'խնդար...։

Այն օրը միաբանները միահամուռ բաղձութեամբ Վեհափառին սրահին մէջ ըստ նախնական սովորութեան մաղթանքը կատարելով, և վերջն ալ իրենց խոնարհաշունչ շնորհաւորութիւնը առանձին Վեհափառ Հայրապետին մատուցանելով՝ պէտք է ընդ մօր Էջմիածնի հոգեզուարճ բերկրութեամբ խայտային. վասն զի իրենց Հովուապետը ամենայն հնարք ՝ի գործ կ'դնէր խնկելու, Սուրբ Օծման այս բարձրագոյն Աստիճանի՝ բանալ իրենց համար ընդարձակ ասպարէզ մի գործունէութեան՝ յորդորելով զիրենք քարոզել աստուածային փրկարար պատուէրները ժողովրդեան, և խնամով պատրաստել Մայր Աթոռոյն Ուսումնարանին աշակերտներէն նոր ժառանգներ հոգևոր գիտութեանց և բարեպաշտութեան մէջ սնած մատաղ հասակին մէջ։

Այն օրը ամենայն արդարամիտ և անկողմնակալ անձինք ուրախացած պէտք է ըլլին և երախտապարտ զգացմամբ համբուրած այն Վեհապետին շնորհաբաշխ և ազգախնամ Սուրբ Աջը, որ հիմն ձգեց հոյակապ Ուսումնարանի մը վանքին պարսպէն դուրս, Ուսումնարանի մը, որոյ հիմը իւր նախորդաց ատեն քանի մի անգամ փորուած և հողով լցուած էր, և այժմ հսկայաքայլ շինութիւնը առաջ կ'երթայ և Աստուծով առաջիկայ 1870 տարւոյն մէջ ՝ի գլուխ կ'ելնէ քաջութեամբ։ Ահա անմահ յիշատակի արժան մի, ահն հաւատոյ և լեզուի հաստատուն Նեցուկ մի, որ դարուց ՝ի դարըս պիտի անմահացնէ ազգասէր հիմնադրին Վեհափայլ անունը։

Բայց մի՞թէ այն օրը բազմաթիւ խմբին մէջ թէ հոգևորականաց և թէ աշխարհականաց չկային նաև այնպիսիներ, որ անտարբեր անունը տիրաբար կ'կրեն, կամ այնպիսիներ, որոց համար վարդը ևս ատելի է, վասն զի փուշ ունի իւր վերայ. ուստի և ամենայն գեղեցիկ ձեռնարկ իրենց մտաց կանգունովը ծուռ ու թիւր կ'չափուի։ Անկարելի է որ չ'ըլնէին կամ չ'ըլնին ազգին մէջ այնպիսի անտարբեր և վայրահաչ անդամք, բայց ժամանակին արդեանցը թողցընելով ճշմարտութիւնը և ազգին եղած օգուտը պարզելու, այնպիսեաց առջևը մեք համարձակ կարող եմք ասել, որ սատանայն ամենայն բարութեանց խափանողը կարող էր միայն նախանձիլ այն օրուան փառաւորութեան վերայ և իւր արբանեակներովը յարձակիլ իւրն նման նախանձամիտ անձանց վերայ, նոցա միտքը շարաշար թու-

նուիրելու և դիւրահնար միջնայիւք կաշկանդելու համար։

Իսկ մեք մեր արդարամիտ և անկողմնասէր եղբարց հետ խնդրելով մեր սիրելի ընթերցողներէն, որ իրենց գործակցութեամբ 'ի գլուխ չհանեն Վեհափառ Հայրապետին ազգաշահ նպատակները, հապա փայլելով ճշմարիտ բարեպաշտութեամբ և ուսումնասիրութեամբ այս լուսաւոր դարու մէջ՝ ջանադիր լինին հեռեւիլ իրենց հարց պայծառափայլ շաւղին, և մեր հետը ուրախանալով Վեհափառ Հայրապետին եռանդնալից ջանացողութեան վերայ 'ի պայծառութիւն ազգային Կրօնի, Լեզուի և Եկեղեցւոյ, աղօթող լինին նորա կենաց երկարութեանը համար, որպէս զի հետզհետէ բարեշուք զարդարի մեր հասարակաց Մայր Աթոռ Էջմիածինը, և մեք հարազատ որդիքս նորա հետ զարգանամք լուսաւորութեան ասպարիզին մէջ։

Ա· Մուրադբէգեանց

Վեհափառ Կաթուղիկոսը բարեհաճեցաւ վարդապետական ականակուռ խաչ շնորհել Ս. Երուսաղէմի միաբան Արժանապատիւ Երեմիայ Վարդապետին։

Գերապատիւ Սարգիս Արք Եպիսկոպոս Ջալալեանց՝ որ կարևոր պաշտօնով մի տարի է հետէ 'ի Տաճկաստան կը գտնուէր, վերադառնալով անտի, և անձնական տկարութեան պատճառաւ մի ժամանակ Լոռւոյ կողմեր և Սանահնայ Վանքը օդափոխութիւն անելով, և շնորհիւ Տեառն ըստ բաւականին առողջացած՝ անցեալ սեպտ. ամսոյ 28-ին լուսանալու առաջին երեկոյին ժամանեցաւ 'ի Ս. Էջմիածին։

Վեհափառ Կաթուղիկոսի Թարգման Գ. Նիկողայոս տէր Յովսէփեանց՝ որ յօգուտ Ս. Աթոռոյս զանազան ծառայութեանց մէջ հաւատարիմ և արդիւնաւոր հանդիսացած է, այս անգամ ևս ճանապարհորդելով 'ի Տփխիս և յԱխալցխայ, ինքեան յանձնեալ կարևոր պաշտօնը ըստ արժանւոյն կատարեց և վերադարձաւ 'ի Մայր Ս. Աթոռս։

Վանահայր Վարագայ Ս. վանուց Գեր. Մկրտիչ Եպիսկոպոս Խրիմեան՝ բացարձակ առաւելութեամբ քուէից Կ. Պօլսոյ Ազգային ընդհանուր ժողովոյ, Պօլսոյ Պատրիարք ընտրուած է. և Օսմանեան Բ. դրան հաստատութեան հրովարտակը ընդունած, Ազգ. Պաշտօնական հրաւիրանօք կը մեկնի երթալ իւր պաշտօնատեղին 'ի Պօլիս։

Սեպտեմբերի 27-ին Վեհափառ Կաթուղիկոսի Անուան տօնախմբութեան օրը՝ Տփխիսոյ Վիճակին Թեմակալ Գերապատիւ Մակար Ս. Արք Եպիսկոպոս, Աստրախանայ Թեմին Կառավարիչ Գերապատիւ Գէորգ Արք Եպիսկոպոս Վեհապետեան, Նոր Նախիջևանայ և Բեսարաբիոյ վիճակին Կառավարիչ Գերապատիւ Գէորգ Արք Եպիսկոպոս Մկրտչեան՝ փութացած էին հեռագրաւ շնորհաւորել Նորին Վեհ. Օծութեան Տօնախմբութիւնը։

Իսկ Շամախւոյ վիճակին Հոգևոր Տեսուչ Գերապատիւ Անդրէաս Արք Եպիսկոպոս՝ նոյն օրը 'ի Շամախի արժանաւոր հանդէս կատարած է 'ի պատիւ Տօնախմ-

բութեան Սրբազնագոյն Հայրապետի, զորոյ նկարագիրը հաղորդած է Հ. Ամախուոյ մեր Երգոյ Թղթակիցը, զոր և ստորև կ՝հրատարակեմք ըստ խնդրանացն։

Նոյնպէս նաև Երցախու (Ղարաբաղ) Վիճակին Փոխանորդ Երժանապատիւ Յովակիմ Վարդապետին յայտարարութենէն կիմանամք, որ Հուշի Վանքի Սուրբ Եկեղեցեաց մէջ Փրկարար Սուրբ Պատարագը մատուցանելէն յետոյ, եկեղեցականաց և աշխարհականաց խուռն բազմութիւն դիմած է տեղւոյն Առաջնորդարանը, և միաբերան ցնծութեամբ շնորհաւորած են Տէր Վահրամ Հայրապետին Ընուան մեծահանդէս ծնունդը։ Նոյն միջոցին կարդացած են բարեմաղթողական երկու ճառեր, մին Հայերէն հանդերձ Ռուսերէն թարգմանութեամբ ընթերցած է Հուշուոյ Եկեղեցեաց բարեկարգ Աւագ քահանայ Կարապետ Հախիեանցը, իսկ միւսը սոսկ Հայերէն՝ Հոգևոր դպրոցին Կրօնուսոյց Գրիգոր Աւագ Վահանայն տէր Աւագեանց։

Այս հանդիսին ներկայ եղած են Գանձակի Վ. սեմ. Դահանդապետը, Հուշուոյ Գաւառապետը և քաղաքական տեսչութեան գլխաւոր ասպիճանաւորքն։

Հարատաց էջից անձկութիւնը չը նեղելով ընթերցեալ ճառերը՝ ի լոյս ընձայել, միայն արժանը կը համարիմք մէջ բերել Կարապետ Աւագ Վահանային ճառէն մի քանի իրաւացի խօսքեր՝ ցուցանելոյ համար, թէ՝ որպիսի՞ ուրախութիւններով կը լեցուին Աղգասէր սրտերը Վ. Հայրապետ Կաթողիկոսին ազգաշահ ձեռնարկութեանց առթիւ։

Ահա այն խօսքերը։

«Հայր Կաթողիկոս մեր հանապազ նը-վիրեալ է զանոյն դիտոյն հաստատակամ բարեսիրութեամբ հաստատեալ ինքեան Հօրին։

Ի կարճ դիտոյն Հովհաննէս-Մելիք է, նա արդէն ակնեալ է վերանորոգել բարեկարգութիւնք զՀոգեւոր Դպրոցս, դարձեալ զմտադրութիւնն՝ ի պայծառութիւն որդւոց արժանաւորաց Եկեղեցւոյ առ ամրութիւն և ի վերականգնումն նախնի վանօրէից և՝ ի բարեկարգութիւն Հոգեւորականութիւն»։

Որչափ իրաւացի լինելը այս խօսքերուն մեք չկամիմք երկարաբանել, միայն սա կասեմք, որ Վ. Հայրապետ Կաթուղիկոսը դպրոցաց համար կանոններ հրատարակեց, և շրջաբերականներով առ ամենայն թեմական Առաջնորդս վիճակաց յղելով, կը յուսայ որ կարճ ժամանակի մէջ բարեբաղեն մեր ազգային- հոգևոր դպրոցները, և շատ գիւղից մէջ՝ յորս մեծ կարօտութիւն կայ Դպրոցաց, հոգևորականաց քարոզութեամբ և յորդորանօք և մեր Հայազգի բարեպաշտ ժողովրդականաց սիրալեր գործակցութեամբ նորանոր Դպրոցներ բացուին, որ միակ և դիակ աղբիւր կը համարուին մեր ապագայ լուսաւորութեան և բարօրութեան։

...Խմբագրութեան Բարեբաղ ամառգրոյ

Կարծիք չկայ, որ՝ մի յիշատակաց արժանի գործ եթէ մեռացութեան փոշու տակ երկար տարիներով անյիշողապէս մնալու լինի, միայն յանձնուելով ժամանակի բերմունքին, այնպիսին օրէ-օր կ՝մոռնուի բարեկարգ մակերևոյթից, որով և կ՝ցուցանէ անհետանալու հեռանքը. նոյնպէս էլ և յիշատակաց արժանի առնելով նոյնպիսին, մամուռը և փոշին փոտահութիւն չեն ունենալ իրանց ծածկոյթը տարածանելու այնպիսոյն վրայ. ուստի կ՝մնայ և նորա մակերևոյթը փայլուն տեսութեան մէջ, ինքն էլ